ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Դվին,Հակոբ Դվնեցի 17
Հեռ:/ 60067/

С. Двин, Акоб Двнеци 17
Тел: / 60067

N 114

ՈՐՈՇՈՒՄ թիվ 17--Ն

12.12.2012 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով՝ "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և "Տեղական տուրքերի և վճարների մասին" ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով՝

Ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների/ ներառյալ ոչ հիմնական/ շինարարության/տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

ա/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական/ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 7500 դրամ:

բ/ սույն կետի ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար:

բ.ա/ 201 քմ-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 15000 դրամ:

բ.բ/ 501 քմ-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 25000 դրամ:

բ.գ/ 1001 քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 35000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 1500 դրամ:

դ/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար– 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման աշխատանքների/բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերը/ համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճանապարհաշինարարական նախագծով:

ա/ չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության , տեղական տուրքը սահմանել – 1500 դրամ:

բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքերից, նախատեսվում են նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի /ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել–2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

1.Ոգելից խմիչքների , վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար – 2500 դրամ:

2.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար – 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար – 350 դրամ

բ/ բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

– 150000 դրամ:

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 1000 դրամ:

7.Համայնքի տարածքում /բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

- 10000 դրամ:

8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

Առևտրի համար - 25000 դրամ:

9. 1,2,3 կետերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

10.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար – 2000 դրամ:

Ավագանի՝

Գ. Բարերամյան

Ա. Բաղալյան

Վ. Ղերմոյան

Գ. Սահակյան

Ա. Ղազարյան

Հ. Նազարյան

Կ. Դավթյան

Համայնքի ղեկավար *Ա. Աբրահամյան*